Մուստաֆա փաշան հասնելով Կարս, անմիջապես ձեռնամուխ եղավ բերդի վերակառուցմանը, որը 1555 թ. հաշտության պայմանագրի համաձայն իրավունք չունեին ամրացնելու։ Մուհամմադի խանը շտապեց այս մասին տեղեկացնել շահին և օգնություն խնդրել։ Թեև շահը Ղարաբաղի և Ադերբայջանի բեկլարբեկիներին հրահանգել էր իրենց զորքերով օգնության հասնել Մուհամմադի խանին, սակայն օգնության եկան միայն Ղարաբաղի Իմամկուլի խանի զորամասերը, իսկ ուսթաջլուներին թշնամի, թաքալու ցեղի առաջնորդ, Ադերբայջանի բեկլարբեկի Ամիր խանը դանդաղեց, նպատակ ունենալով ուսթաջլու կրզրլբաշներին միայնակ թողնել թուրքական գերազանց ուժերի առաջ։ Եվ իրոք Մուհամմադի խանի և Իմամկուլի խանի ընդամենը 15.000 կվողներից բաղկացած ուժերը չդիմանալով Մուստաֆա փաշայի գերակշիռ զորքերի հարձակմանը, պարտություն կրեցին ու դիմեցին փախուստի[31]։

Այս չափազանց հեշտ ձեռք բերված հաղթանակից հետո Մուստաֆա փաշան համարյա առանց դիմադրության հանդիպելու մտավ Վրաստան, գրավեց բոլոր ամրությունները, ապա անցավ Շիրվան, որտեղ նույնպես առանց լուրջ ընդհարումների տիրեց Շամախու, Արեշի, Բաքվի և այլ բերդերի, ամրացրեց դրանք և անհրաժեշտ ռազմամթերքով ու հանդերձանքով ապահովված բերդապահ կայազորներ թողնելով, ետ վերադարձավ։

Երևանի գրավման նպատակով ծրագրված արշավանքը իրագործվեց մեկ տարի հետո միայն՝ 1579 թ. աշնանը։ Դա լալա Մուստաֆա փաշան հանձնարարեց Էրզրումի Հուսեյն փաշային, նրա հրամանատարության տակ դնելով 40.000-անոց բանակ։ Իսքանդար Մունշիի պատմության Մատենադարանում պահվող XVII դ. մի ձեռագրում պահպանվել է այս դեպքերի մանրամասն նկարագրությունը, ըստ որի Մուհամմադի խանի փոքրաթիվ զորքերը կատաղի դիմադրում են։ Չնայած թուրքերին հաջողվում է կոտրել այդ դիմադրությունն ու մտնել Երևան, սակայն նրանք միայն մեկ օր են կարողանում մնալ այնտեղ, քանի որ կրզրլբաշների ուժեղ հնշման տակ ստիպված են լինում թողնել քաղաքն ու նահանջել դեպի Էրզրում[32]։

Սակայն այս մեկ օրը նույնիսկ բավական էր, որպեսզի գաղաղած ենիչերիները անասելի կողոպուտի և գերեվարության ենթարկեին քաղաքի բնակչությանը։ Թուրքերը նախապես ասպատակել էին նաև Երևանի մերձակա 18 գյուղերը[33]։ Այս աղետալի իրադարձությունների պատկերավոր նկարագրությունը պահպանվել է նաև Հովհաննես գրչի չափածո մի հիշատակարանում[34]։

Այս դեպքերից հետո Երևանը չորս տարի մնաց կրզրլբաշների տիրապետության տակ։

1583 թ. սուլթան Մուրադ III-ը Ֆարհադ փաշային նշանակեց արևելյան բանակների հրամանատար և հրամայեց արշավել դեպի Երևան ու Նախիջևան։ Մուհամմադի խան Թոխմախը, թեև այդ մասին տեղեկացրեց Իմամկուլի և Ամիր խաներին, սակայն նրանցից ոչ մի օգնություն չստանալով՝ ստիպված

---

31 Իսքանդար Մունշի, հ. I, էջ 233, տես նաև, «Թուրքական աղբյուրները», հ. I, էջ 35—36։

32 Տե՛ս Մատենադարանի արաբատառ ձեռագրեր, № 11, էջ 237ա։

33 Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., հ. I, նամեց Վ. Ա. Հանոյան, Երևան, 1951, էջ 172։

34 Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 300—301։